

այլ եւ կշտամբէին զիս լսել նոցա . Բաւական է , առեն , պանդխտութիւնդ այսչափ եւ օտարութիւնքդ , զոր կրեցեր . Հաւանեաց մեղ եւ մի ի սպառ ձգեր զմեզ ի սուգ եւ ի տրամութիւն : Քանզի ունէի երկու քոյր եւ քրորդիք 20 եւ այլ յուրով ազգականք . այլ եւ տեսալ զհայրենի տունս եւ զբնակութիւնս , զստացուածս եւ զայլս՝ խանդաղատեցայ եւ ի գութանկեալ կամաւորեցայ մնալ առ նոսա :

Եւ մինչ դեռ Ղուկաս պարոնտէրն անդ էր՝ 25 իսկոյն նշանեցին զիս ընդ աղջկան միոյ¹ : Որ եւ յետ սակաւ աւուրց զնաց Ղուկաս եպիսկոպոսն յերուսաղէմ : Եւ ի թվին Ռկթ (1620) , Օգոստոս ժի , յետ ննջման Ամենօրհնեալ Աստուածածնին պսակեցայ եւ հարսանիք արի : 30 Եւ առեալ զկենակիցս ի Լովայ տարայ զնա ի տուն հօրս իմոյ եւ ի սենեակ մօրս ի Չամոսցա սիլասիմ :

ՍԻՄԷՈՆ Ի ԶԱՄՈՍՅԱ 1620—1624 :

Եւ կացի անդ հինգ ամ : Եւ յետ ամաց ինչ բազում անցք անցին ի գլուխս , այլ եւ յուրով 35 չարի եւ փորձանաց զիպայ . վիշտք եւ նեղութիւն գտի ես եղկելիս ի դաւառս իմ , ի տուն եւ յազդատոհմիս , ի չար եւ ի յասլիրատ

21 ուրով : — 23 խանթաղատեցայ : — 24 կամաւորեցա : — 29 ամէնօրհնեալ : — 31 ի (Լովայ) չիֆ : — 32 ի զամոսձայ : — 35 յանցք : — 36 զիպայ :

¹ Սիմէոն կը նշանուի 1619 Սեպտ. 12ին . իր նշանածն էր Նասդուխնա , Քէվորովից Եսաքոյի զուստրը (տե՛ս Յառաջարան) :